№ 01-4-28-25 « 24 » 02 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԿԻՆ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Հարգարժան տիկին Անդրեասյան.

Ի կատարումն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.12.2020 թվականի «ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 48-Ն հրամանի 8-րդ կետի պահանջի ներկայացվում է «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի մանկավարժական աշխատողի թափուր տեղի մրցույթի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ vetarmenia.am կայքէջում տեղադրելու նպատակով:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՀԱՅԿ ԲՐՈՒՏՅԱՆ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի /այսուհետ՝ Քոլեջ/

- «Ռուսաց լեզու» առարկա պարապող մանկավարժի (0,5 դրույք) թափուր տեղը համալրելու համար:
- «Ֆիզիկական կուլտուրա» առարկա պարապող մանկավարժի (0,5 դրույք) թափուր տեղը համալրելու համար:

Վերոնշյալ թափուր տեղի համար կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը.

1. Դիմում,
2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. Անձնագիրը (բնօրինակը և պատճենը),
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 4),
6. Մեկ լուսանկար՝ 3Х4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

- Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են Քոլեջում՝ 2025 թվականի փետրվարի 25-ից մինչև մարտի 7-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 17:00:
- Մրցույթը կկայանա 2025թ. մարտի 12-ին ժամը 13:00-ին՝ Քոլեջում:
- Հասցեն՝ Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան 5:

☎ Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի № 48-Ն հրամանին կամ զանգահարել (0263) 4-36-59,
(094) 000415 հեռախոսահամարներով: